42. ՈՉԻՐՆ ՈՒ ԴԵՎՐԻՇ

Կէղի, չէղի թագավոր մի կէղի։ Թագավոր ու ոզիր խրտ իրարու կմժլին։

Թագավոր կըսա թե.— Վազի՛ր, մըր խողի մեջ էնպես զանգին մարթ կա՞ օր էրկու հարուր քուռակ էրկու տարեկան էղի, մեկ ռանգին կարմիր էղի, որձ էղի, գլոխ լէ բաշ էղի։

Ոզիր լէ վերուց սաց.— Թագավոր սաղ մնա, կան։

Ըսավ.— Օր թե կան, պետք ա գու ընձի պերիս. օր չպերեցիր, պետք ա քու գլոխ զարկիմ։

Էդ ոզիր էլավ գնաց ուր տուն, նե զրուցեց, նե ծիծղաց ու շատ մառախ էնեց (մտածեց) ու մեջ ուր մառախին քնավ։

Հ՛էքսի (մյուս) օր, ոզիր էկավ տուն, էլման էնպես մառախ էնեց, նե զրուցեր, նե ծիծղեր։

Ըստհաղ կնիկ մոտեն կհարցու.— Ոզիր, էս էրկօր նե դու կծիծղաս, նե դու կզրուցիս, էս քու դարդն ի՞նչ ա։

Ըսավ.— Իմ դարդ՝ շատ դարդ ա։ Թագավոր ընձնե հարցուց ըսավ թե՝ «Իմ հողի մեջ էնպես մարդ կա՞, օր էրկու հարուր քուռակ, էրկու տարքենիկ, մեկ ռանգին կարմիր ու որձ ու գլոխ բաշ էղի»։ Ես լէ վերցուցի ըսի՝ թե կան։ Էն լէ ըսավ՝ «Օր թե չպերեցիր, քու գլոխ կղարկիմ»։ Ես մառախ չէնիմ ապա էն վո՞ն էնա։

Էդ տեխ էտոր կնիկ լէ ընկավ մեջ շատ մառախի։

Ոզիր ըսավ.— Կնիկ, էլի էրկու հազար օսկի բիր, հ՛ըլնամ քամարս (մեջկապ)։

Ողիր առեց օսկին, էլավ ուր ծին խեծավ, էրկու ասքար լէ ուր խետ տարավ, ու ճամբախ ընկավ։

Գնա՜ց, շատ էրկրներ ման էկավ։ Թագավորն ընդոր վեցն ամիս ժամանակ էր տվեր, թե չպերեր, գլոխ կզարկեր։

Էդ ողիր ըսավ. «Պտի ես էրթամ Արաբստանու թարաֆ»։ Ողիր գնաց Արաբստանու մեջ։ Տեսավ օր մեկ չադր մի կպսպղա չոլի (անապատի) մեջ։

Ողիրն ըսավ.— Էղնի էստեղն, չէղնի էստեղն ա թագավորի ըսած քուռակներ։

Գնաց ողիր, մոտեցավ չադրին, տեսավ օր էդ չադրի սներ օսկի ու արծաթ էր։ Ընդոր չադրն լէ օսկի ու արծաթ թելներով գործուկ էր։

Չադրի տերն տեսավ օր էդ էկողը աղա, մեծ մարդ էր, մըշկներն էլան էնտոր ձիու գլոխ պռնեցին։

Էդ ողիր ծիուց ցածր հ'իջավ։ Չադրի տերը ըսավ.— Հրամեցի ներս էրթանք։

Գնացին։ Էդ մարդ վըր խալու ու խալիչին նստավ։ Չադրի տեր կաֆա էպեց ու լցեց օսկի ֆինջըներ, պերեց։ Էդ տեխ ողիր էմլը ուրախցավ ուր սըրտընին գըշմընի (մխիթարանք) տվեց, ըսավ. «Էստեխ իշալլահ (աստծով) իմ գործ պիտի կատարվի, ու ես ամոթելի չէղնիմ թագավորի մոտենն»։

Էդ տեխ ուրանց խամար մըժլան, հըրի կես օրին։ Կես օր լէ քաշին հաց կերան։

Չադրի տեր (դեվրեշ էր) ըսավ թե.— Ողիր, ես կաշկիմ օր դու նե՛ կծիծղաս, ու նե՛ կուրախնաս, ու զրուցքըմ լէ չէնիս, քու ցավն ին՞չ ա։

Ըսավ.— Դավրեշ բաբա, իմ ցավ ջատ ցավ ա։

Կըսա.— Կարելի՞ ա, դու պատմիս ընձի։

Ողիր կվերցու կասա.— Դեվրիշ բաբա, իմ ցավ էս ա օր, թագավոր ընձնե կուզա օր ես մեկ մարդուց պերեմ էրկու հարուր որձ քուռակ, կարմիր էղնի, գլոխ բաշ էղնի, ուրանք լէ էրկու տարեկան էղին։ Օր չտանիմ, գլոխս ի կզարկա։

Դարվեշ բաբան ծիծղաց, ըսաց.— Ողիր, էտի կոլայ ա, ուրախութեն էնա, ծաղր էնա ու մըժլի։ Էտի քեզ համար առավոտուն պատրաստ ա։

Էդ տեխ ողիր բաշլեց (սկսեց) ուրախութուն, ու մըժլել ու ուտել, խմել։ Հ'իրիկուն օր էղավ, ողիրի տեխ թալեցին ու ողիր մեկ ուրին դինջ քնավ։

Լուսն օր պացվավ, ըտ ոզիր հ'ելավ ուրա՞խ, ուրա՞խ, է, էդ Դեվրիշ բաբան էր էլավ էմալ էտոր կաֆա ու զատ պատրաստեց, խմեցին, կերակուր լէ կերան։

— Դե,— ըսավ, —ոզիր, հ'ելի էրտանք քուռկըներ քզի թասլիմ էնիմ։

Ոզիրն էլավ ուրախ, ուրախ Դեվրիշ բաբի կողքին ընկավ ու գնացին դեմի քուռկըներուն մեշ։ Էրկու հարուր քուռակ ճոկեց, կարմիր, գլխներ լէ բաշ, որձ ու ոզիրի հ'առեջ էցկեց։

Ոզիր լէ ընտրնե շատ շնողքըլավ։ Դեվրիշ բաբեն վերուց ըսավ.

— Էսի լէ, իմ թագավորին փեշքեշ, թե քիչ ա, շատ ընդունա։

Ոզիրն էր, էլավ ինք ու էրկու ասքար, էտ քուռակներ էծկին (ձգեցին) ուրանց հ'առեճ, առան ու էկան։ Թե մեկ ամիս, թե էրկու ամիս, ճամբաս էկան ու թագավորին հասան։

Մուժտեն գնաց թագավորին, թե՝ «Ոզիր քու ուզած քուռկներ պերեց»։

Թագավորն էր էլավ, աչկեց, տեսավ օր հանդե զքուռկըներ գերեց սարի հ'առեճ կանգըցուց։

Թագավոր ըսավ.— Էֆերիմ, ոզիր, քու խոսքտի կանչըցիր։

Էտ տեխն էր՝ ոզիր հ'ելավ ու դեմի ուր տուն գնաց, ըսավ.

— Կնի՛կ, իմ մուժտեն քըզի, էդ քուռկրներ պերեցի ու պոծա ազատվա։

Տառնանք էրտանք Դեվրիշ բաբի վրրեն։ Դեվրիշ բաբեն էտչափ դովլըթի տեր, խեղճ էղավ ու մալ ու դովլաթ վերեներն խըլըսավ, էղավ ավուր հացին կարոտ։

Էլավ ուրին մեկ թանուկե (թիթեղե տուփ) մի թալեց թեվ, մեկ խըշտ մե առավ ծեռ ու ընգավ աշխար ման էկավ։ Ուրին ժողովք կէներ։ Էնպես ժողովք էնելով էտ թագավորի քաղաքն էկավ։

Իրիկուն էր, ոզիր էլավ ֆայթոն նստավ, էկավ օր ուր տուն պըտի էրտեր, տեսավ օր մեկ դեվրիշ մի ըտ չարսուն ման գիկա, կղվռնա՝ ուրին փարա կժողվա տուքըներուց։ Դեվրիշ տեսնելու քիմի զէտ Դեվրիշ ճանչըցավ, ֆայթոնչուն ըսավ. «Ֆայթոն կանգըցուց։ Էլավ ուր կողքի մարդ ճամփեց, ըսավ.

— Գնա, էնա Դեվրիշ բռնա ու պիր։

Մարդը գնաց Դեվրիշ պռնեց։ Դեվրիշն ըսավ.

— Ընձի ինչի՞ կպռնիք ու դո՞ր կտանիք։

— Ըսավ թե.— Ոզիր քըզի կուզա։

Էդ դեվրիշ շատ վախեցավ, ըսավ.— Իմ մեղքն ի՞նչ ա, ձի կտանեք ոզիրի մոտ, ես խեղճ դեվրիշ մարթ իմ, ընծի ընգեր իմ ժողվի կէնիմ։ Աստված տվող, չտվող շեն պախա։

Ըսավ.— Չէ, քելա՛, քըզի ոզիր կկանչա։ — Տվեց հ՚առեճ քաշկըռտնելեն տարավ։

Դեվրիշ բաբեն ոզիրի ֆայթոնի հ՚առեճ կանգըցուց։ Դեվրիշ բաբեն էր, դողաց ու վախեցավ։

Ըսավ.— Ոզիր սախն (ուղիղ) ասա, իմ սուչս (հանցանք) ի՞նչ ա։

Ըսավ.— Քու սուչն էն ա, օր դու պտի էլնիս՝ ֆայթոնի մեջ նստիս։

— Է՛,— ըսավ,— դու ոզիր մարդ, ես մե խեղճ դեվրիշ, ի՞նչ-պես կէղի օր ես հ՚ելնիմ նստիմ քու կշտին։

Դեվրիշ բաբեն խանեցին ու ֆայթոնի մեջ նստըցուցին։

Դեվրիշ բաբեն ուրին մտածեց, ըսեց. «Ջանըմ, էդ ի՞նչ դեվի ա». շատ մտածեց ու էդ մառախի մեջ մնաց։ Ֆայթոն քշեցին դեմի ոզիրի տուն գնացին։ Ոզիրն էլ, ֆայթոնից իշավ, Դեվրիշ բաբեն լէ իշավ։

Ոզիրն ըսեց.— Դեվրիշ բաբա, հրամեցիր, ընգիր հ՚առեճ։

Դեվրիշ բաբեն ըսեց.— Մեղա աստծու, դու ոզիր մի իս, ես դեվրիշ, ես ինչպե՞ս ընգիմ քու հ՚առեճ։ Հրամեցիր, դու հ՚առեճ ընկի։

Ոզիրն ընկավ հ՚առեճ, ու դեմի հ՚օղեն գնացին։ Գնացին խալի ու խալիչի վրեն նստան։ Էդ տեխ ոզիրն ուր հ՚առեճի մարդերուն ըսեց, օր ուրանց կաֆա (կոֆե) չայ պերին։

Չայն ու կաֆեն խմելուց սորա (վերջ) հաց ու զատ (կերակուր) պատրաստեցին ու պերեցին կերան։

Ոզիր վերցուց ըսեց.— Դեվրի՛շ բաբա՛, դու ընձի չճանչընաս։

Ըսավ. —Չէ՛ ես քըզի չճանչընամ։

Ոզիրն ըսեց. —Իմա՞լ դու ընձի չճանչընաս։

— Վոլլահ,— ըսավ,— ես քզի չճանչընամ։

Ոզիրն ըսավ.— Ես էն մարդն ենք, օր էկա քու շադրի դուռ, օր դու էնքան պատիվ իքրամ էրեցիր, էրկու հարիր ձիու կարմիր, որձ քուռակ փեշքեշ էրեցիր թագավորին։

Դեվրիշ բաբեն ասավ.— Է՞ էդի էնեց քսան տարի, վի՞ր միտ դիկա։

Էդ տեխն էր, Դեվրիշ բաբեն ուրախացավ։ Ու լուսմտի օր էղավ, ողիր զԴեվրիշ բաբեն բաղնիս ճամփեց, ու պերեց լավ ծեռք մի շոր հադուց։

Ողիրն ասավ.— Ես քըզի կռնամ օր չըրաղիմ (վարձատրեմ), թագավոր սախ մնա, ես պետք է թագավորին ասիմ։

Էդ Դեվրիշ բաբեն էր մնաց ողիրի տուն ու ողիր էլավ դեմի թագավոր դնաց։ Թագավորին ասավ.

— Թագավոր սաղ մնա. մեկ քսան տարով հ'առեճ օր դու ընձնից էրկու հարուր կարմիր որձ ու բաշ ձիու քուռակ ուզեցիր, էն մարդ, օր ես ընդուց պերի ըդ քուռկներ, ըդ մարդ մըկա շատ խեղճ էղի, ընկի ժողովք կէնա։

Թագավոր վերցուց ասավ թե.— Հ՞էգուց պըտի ընձի հ'ոդա պըտի պերեք։

Լուսուն էղավ, վեզիր առավ էդ Դեվրիշ ու թագավորի մոտ գնաց։

Թագավոր վերուց ասավ թե. —Դեվրիշ բաբա, քըզի պտի էնիմ ճաղճըպան։

Դեվրիշ լէ վերուց ասավ թե.— Թագավոր սաղ մնա։

Դեվրիշ տարան էրին ճաղճըպան։ Թագավորի ճաղաց լէ, քսան ու հինգ քար խըտ իրարու կզվոներ։

Դեվրիշ բաբեն օր ներս մտավ, էդ քսան հինգ ճաղցի քար ճապկի (ձախ) զվոնացին։

Էլան թագավորի ճաղճըպըներ կնացին թագավորի մոտ բոզոք տվին։

Թագավոր ասեց.— Ես ընդունեցի էդ մարդ, թող ճապկի օլըրտի։

Մե ժամանակ մի, էդ ճաղաճ ճապկի զըվրոնաց։ Ավուր մեկ տեսան օր ճաղաց դարձավ աչկի (աշ)։ Խաբար տվեցին թագավորին թե՝ «էսօր ճաղաց դարձավ աչկի կպտրտվի»։

Թագավոր ուրախացավ, ու մարդ ճամբեց ու Դեվրիշ բաբեն բերեց։

Թագավորն ասեց.— Դեվրիշ բաբա, քու քար ճապ կպտոտեր, իմ գովլաթ լէ տեն քըզի՝ կփճաներ, քու քար ճապ կպտոտեր, մըկա,— ասավ,— ի՞նչ օր տամ քըզի, կէղի քըզի գովլաթ, չումքի քու քար աշ կզվրոնա։

Թագավորն էր, էլավ մեկ տաս-խազար օսկի ըդրան տվեց։ Էդոր կընգրտոց, ճրժերուն հ'ըմնուն մեկ-մեկ ձեռք հալավ կարել տվեց ու թագավոր զԴեվրիշ բաբեն զրախեց ու ճամփու դրեց։ Դեվրիշ բաբեն թագավորուց շատ շնողքըլավ, ընգավ ճամբախ։

Ու ոզիր բռնեց զԴեվրիշ բաբեն ուր տուն տարավ, չորս խազար օսկի լէ ոզիր Դեվրիշ բարուն փեշքեշ էնեց ու Դեվրիշ բաբեն ոզիրից շատ շնողքըլավ ու ճամբախ ընգավ։

Մեկ տասն օր, մե ամիս մի ճանապարհ գնաց, ուր տուն խասավ։ Ըդոր կնկա ճիժ օր զԴեվրիշ բաբեն տեսան, շատ ուրախցան։

Կնիկ ըսավ թե.— Դեվրիշ բաբա, դու պարով էկար, մենք շատ անոթի ենք, ու ծառավ օրեր հ'ընցուցինք։

Դեվրիշ բաբան ըսավ. —Կնիկ, իմ անկըճկլեն քըզի, օսկի շատ իմ պերե, պըտի էնդ անոտուն, ծարվոտուն պտի մոռնաս։

Էդ Դեվրիշ բաբի կնիկ ըսեց թե.

— Դեվրիշ բաբա, էդ փարեն դո՞ր դատար։

Դեվրիշ բաբան ըսեց.— Մեկ քսան տարով հ'առեճ, դատա էս փարեն։

— Ինչպե՞ս քսան տարով հ'առեճ էդ փարեն դատար։

Ըսեց.— Կնի՛կ, դիտե՞ս ինչպես դատա, քսան տարով մի հ'առեճ ոզիր մի չէկա՞վ մըր տուն, ընձնե տարավ էրկու հարուր կարմիր որձ, էրկու տարեկան ձիու քուռակ։ Ես գնացի ժողովք էնելու, էն մարդ էկավ, ընձի տեսավ ու ճանչցավ։ Ընձի ուր ֆայ-թոնի մեջ տարավ ուր տուն, ընձի շատ պատիվ, իքրամ էնեց, ու դեմի թագավորին տարավ։ Թագավոր ընձի ճազճըպան էրեց։ Էն ճաղցի քարեր ճապկի օլորտան։ Մեկ էրկու ամիս հ'ետև քարեր աչկի դարձան։ Թագավորին խաբար տվեցին, թագավոր ընձի տարավ, ըսավ. «Դեվրիշ բաբա, հարի ըսօր քու քար ճապ կէրտեր, օր ես իմ թագավորութեն լէ քըզի տենք, զուր էր, մըկա քու քար աչկի դարձավ, թե մեկ խնձոր լէ տամ քզիկ, քու կարո-ղութեն էն մեկ խնձորից կպռնիս»։ Ըդհախսի թագավոր ընձի տաս-խազար օսկի փեշքեշ էնեց, էդ խալվըներ լէ կտրեց մըզի։ Ոզիր լէ չորս խազար օսկի մըզի փեշքեշ էնեց, ընձի չըրաղ էրին ու դեմի տուն ղրկեցին։

Էրկնուց իրեք խնձոր իջավ, մեկ ասողաց, մեկ լսողաց, մեկ ականջ արողացն։